ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(7 հուլիսի, 2013թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Դա՛ է իմ սիրելի Որդին, դրան լսեցէք»
(Մարկ. Թ. 6):

Այսօր Պայծառակերպություն է՝ Այլակերպությունը մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի, եւ մեր մտքով, սրտով, հոգով եւ նաեւ զգայարաններով սավառնում ենք եւ բարձրանում Թաբոր լեռը, ուր մեր Տերը իր աշակերտների՝ Պետրոսի, Հակոբոսի եւ Հովհաննեսի հետ բարձրացավ Իր վերջին պատգամը փոխանցելու աշխարհին եւ Իր աստվածային ներկայությունը եւ հայտնությունը վերջնականապես հաստատելու մարդկանց մտքերի եւ սրտերի մեջ: Ավետարանիչը մեզ պատմում է, որ այդ լեռան բարձունքի վրա Հիսուս պայծառակերպվեց, լուսավորվեց արեգակի պես եւ առավել մաքուր եւ լուսավոր, որ չէր կարող համեմատվել որեւէ ստեղծված լույսի հետ: Եւ Նրան հովանավորում կամ վկայում էին Մովսեսը եւ Եղիան, Օրենքը եւ Մարգարեությունը, իրավունքը եւ պատասխանատվությունը: Եւ աշակերտները ապշած էին, չէին հասկանում, թե ինչ է այս իրողությունը: Երբ հայտնվեց լուսավոր ամպը եւ լսվեց ձայնը Հայրական. «Դա է իմ սիրելի որդին, Դրան լսեցէք»:

Սա Աստվածհայտնության երկրորդ մեծագույն իրականությունն է: Այդպես էլ վաղ Եկեղեցին կոչել է Պայծառակերպությունը՝ որպես Աստվածհայտնություն: Մի քանի իրականություններ, խորը խորհրդաբանություն՝ սիմվոլիզմ կա այս ամբողջ պատմության մեջ: Տեսնում ենք ավետարանիչների նշումը ժամանակի մասին՝ «վեց օր հետո» (Մատթ. ԺԷ. 1), տեսնում ենք տարածությունը՝ լեռը, անծանոթ ամպը խորհրդավոր, տեսնում ենք լուսավորված եւ փառավորված Հիսուս, կարկամած աշակերտներ եւ հատուկ ընտրված աշակերտներ, տեսնում ենք պատմության մեծագույն կերպարներ՝ Մովսես եւ Եղիա, որոնք կրում էին օրենքը եւ մարգարեությունը: Այս բոլորը ամբողջ խորհուրդն են կազմում եւ վկայությունը մեր Տիրոջ Աստվածհայտնության: Եւ այս խորհուրդի մեջ մի քանի խոհեր կան, որ ուզում եմ կիսել ձեզ հետ, սիրելի՛ ժողովուրդ:

Առաջինն այն բացարձակ հոչակումն է, որ կատարվեց լեռան վրա. «Դա՛ է իմ սիրելի Որդին, Դրան լսեցէք»: Սա մի բացարձակ հաստատում է՝ ոչ թե սոսկ մարդկանց կողմից

հրաշքներ տեսած եւ կարկամած վկայության, այլ աստվածային ձայնով եւ վերջնական հաստատումով: Գիտենք, որ մեր Տիրոջ մկրտության ժամանակ, Աստվածհայտնությունը տեղի ունենալով, նույն խոսքերը կրկնվեց մեր Տիրոջ մասին. «Դո՛ւ ես իմ սիրելի Որդին, որ ունես իմ ամբողջ բարեհաճությունը» (Մարկ. Ա. 11): Եւ այս անգամ Թաբոր լեռան վրա հաստատեց՝ ասելով, մարդկանց ուղղելով. «Դա՛ է իմ սիրելի Որդին», դա է ձեր փրկության ճանապարհը, Նա է, որ կարող է ձեզ առաջնորդել դեպի աստվածնմանության վերականգնումը: Տեսնում ենք, որ այս բացարձակ հաստատումը տեղի է ունենում տարածության եւ ժամանակի մեջ: Ինձ եւ ձեզ համար մեր Տերը գնեց, նվաճեց այդ տարածությունը եւ ժամանակը՝ նոր տիեզերքի, նոր տիեզերաբանության, նոր մարդաբանության, նոր մարդու խորհուրդը հաստատելով:

Երկրորդ՝ այդ պատգամն ուղղված է նաեւ մեզ՝ որպես Աստծո պատկերը եւ նմանությունը: Մենք ստեղծված ենք Աստծո պատկերով եւ նմանությամբ, սակայն մեղքի պատճառով կորցրել ենք այդ նմանությունը: Այսօր մեր ամբողջ կյանքը, շարժը, ձգտումները, հոգեւոր զգացումները, գործերն ուղղված են միայն ու միայն, եւ այդպես պետք է լինի, մեր աստվածային նմանությունը վերականգնելուն: Եւ սա Թաբոր լեռան վրա երկրորդ արարչության սկիզբն էր, որ մեր Տերը հաստատեց: Ինչպես առաջին արարչության ժամանակ վեց օր հետո, մարդուն ստեղծելուց հետո Աստված հանգստացավ, այնպես եւ երկրորդ արարչության սկզբի ժամանակ վեց օր հետո, ինչպես ասում են ավետարանիչները, մեր Տերը վերստեղծեց մարդուն Իր Աստվածհայտնությամբ եւ մեզ դրեց նոր իրականության, նոր ժամանակների եւ նոր կյանքի՝ աստվածանալու կյանքի մեջ: Եւ Ինքն իսկ իր բերանով ասում է. «Դուք աստվածներ եք, դուք Ամենաբարձրյալի զավակներն եք» (Յովհ. Դ. 34-35, Սաղմ. ՁԲ. 6): Եւ այս պատիվն ու արժանապատվությունը մարդկային աստվածնմանության, Աստված լինելու, Աստծու որդի լինելու տրված է մեզ սիրելի ժողովուրդ, չի տրված հրեշտակներին, չի տրված ուրիշ որեւէ մեկին, տրված է ինձ եւ ձեզ, յուրաքանչյուրիս, ամեն մեկիս, որ այստեղ ենք կամ այլուր: Ամեն մեկիս, որ հավատում ենք, որ «Նա է Աստծու Որդին», Որին մենք լսելու ենք կոչված:

Եւ երրորդ՝ այսօր տոնն է ամենաբարձր, ամենահորը արտահայտության՝ Աստվածհայտնության: Սրան զուգընթաց մեր կյանքի մեջ այս տոնը կոչվել եւ կոչվում է նաեւ Վարդավառ, Վարդիվոր, Վարդեվոր եւ զանազան այլ կերպերով: Սակայն երբեք այդ ժողովրդական սովորությունը չի կարող գրավել Աստվածհայտնության տեղը:

Այսօր լսում ենք տարատեսակ արտահայտություններ, եւ ես չեմ ուզում այս բեմից, այս Ս. Խորանից խոսել դրանց մասին: Բայց պարտավոր եմ այս տոնի մեծաքանչ խորհուրդի միջից հպանցիկ անդրադառնալ: Լսում ենք ձայներ, աղմուկներ, խոսքեր, արմատների վերադարձի կոչերով, հեթանոսության քարոզչություն: Դրանք բոլորը թերեւս մեր կենսագրության մաս են կազմում, մեր կենսագրության ժամանակահատվածն են, երբ մենք մանուկ էինք, երբ մենք, ինչպես առաքյալն է ասում. «Մանկան պես էինք մտածում, մանկան պես էինք խորհում, մանկան պես էինք դրամաբանում» (Ա. Կորնթ. ԺԳ. 11): Մենք մեծացանք, հասունացանք եւ որեւէ անհատ կամ հավաքականություն չի կարող հասունությունը, հասուն ժամանակը, գիտակցված ժամանակը փոխել իր ման-

կության չգիտակցվածության հետ: Դա մեր կենսագրությունն է, բայց ոչ երբեք մեր կյանքը: Մեր կյանքը գրված է Քրիստոսի կողմից: Մեր կյանքը պարտված ասպվածներին հետեւելու կյանք չէ, մեր կյանքը զոհված, ոչնչացած երեւույթներին հետեւելու կյանք չէ: Մեր կյանքը հաղթանակի, սիրո Աստծուն հետեւելու կյանք է: Մեր կյանքը նրա կյանքին խառնված՝ մեծ Աստվածհայտնության մեջ մեզ դեպի աստվածայնացում առաջնորդելու կյանք է:

Մենք անցել ենք այդ ճանապարհը, ժողովո՛ւրդ: Անցել ենք ճանապարհը մանկանալու, անցել ենք այդ ճանապարհը պարտվելու, անցել ենք այդ ճանապարհը ինքնառչնչացվելու: Մեզ համար այլեւս կա մեկ Քրիստոս, Որդին Աստծո՝ Նրան լսելու հետեւողության, Ով հաղթանակի եւ սիրո Աստվածն է: Մեր այսօրվա ժամանակների մեջ, երբ համատարած արժեքների նվազում եւ հարաբերակցությունն է տիրում, երբ զանգվածային լրատվությունը, տեղեկատվության անսահմանափակությունը փորձում է մարդուն վերածել սոսկ ֆիզիկական գոյության, երբ մարդկային «իրավունքի կրոն» է ստեղծվում, երբ սկսում է մարդկային իրավունքը գերիշխել մարդկային պատասխանատվության վրա, այսօր մեր Եկեղեցու լույս խորաններից մեր կյանքի եւ հավատարմության, սրտերի եւ մտքերի խորաններից դարձյալ լսվում է եւ լսելու է մեր սիրո եւ հաղթանակած Աստծո ձայնը. «Սա՛ է իմ սիրելի Որդին, սրա՛ն լսեցէք»: Դա մեր փրկության ճանապարհն է թե՛ որպես անհատ եւ թե՛ որպես հավաքականություն, ամբողջականություն, ժողովուրդ եւ ազգ: Եւ այսօր երանի՛ թե յուրաքանչյուրիս մտքերի մեջ այդ մաքրվող ջրերի հետ, որ ցողում ենք իրար վրա՝ որպես ժողովրդական սովորություն եւ ոչ երբեք կրոն, այդ ջրերի մաքրության միջից ինձ եւ ձեզ համար եւս լսվի Աստծո խոսքը. «Դո՛ւ ես իմ սիրելի որդին, որի հետ ես ամբողջ բարեհաճությունն ունեմ եւ ես լսեցի ու դարձա քո Աստվածը, Առաջնորդը, Հերոսը եւ Ջորագլուխը»:

Շնորհավորում եմ ձեզ եւ մեզ բոլորիս այս մեծ Աստվածհայտնության եւ մեր հնաբավորության դեպի Աստված ընթանալու փոնի առիթով: Մաղթում, որ այս երկրորդ արարչության ժամանակաշրջանի մեջ մեր կյանքն իսկապես լինի սիրո, խաղաղության եւ հաղթանակած արժեքների կյանք: Թող Աստված միշտ հայտնի մեզ իր ճշմարտությունը, արդարությունը, իր անկեղծ ու ազնիվ էությունը եւ մեզ մղի դեպի աստվածպաշտություն, մեր Ս. Եկեղեցու կյանքի միջից՝ որպես Աստծու Հայտնության բարձրագույն ներկայությունը այս երկրի վրա, այս հողի վրա այսօր, վաղը եւ հավիտյանս հավիտենից. ամեն: